

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ԳՐԱՆՅՎԱԾ Է

ԵՐԵՎԱՆԻ ԲԱՎԱԲԱՊԵՏԻ

ՀՀ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՈՒՆՆԵՐԻ

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐՈՒՄ

Ն.ՈՐՈՇԱՍՏԻ  
N 1899 29/XII - 2000

20 01 1998 թ.  
ԳՐԱՆՑԱՆ ԹԻՎ 286/40 02010

ՎԿԱՅԱԿԱՆ ՕՒՆ 022540

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ *ընկերություն*  
*Սպանդարյան*

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԻՆ ՊԵՏ

*Սպանդարյան*  
*ԲՈՒԿ 4.4 Կրթություն/Գրքեր*  
26 01 2000 թ.

ԵՐԵՎԱՆԻ ԲԱՎԱԲԱՊԵՏ



# Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ի Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«Երառապասարկում»

Փակ բաժնետիրական ընկերության

Երևան 2000 թ.

## 1. *Ընդհանուր դրույթներ*

- 1.1. Ընկերության ֆիրմային անվանումն է  
լրիվ՝ Երեւանի քաղաքապետարանի «Երառսպասարկում» փակ բաժնետիրական  
ընկերություն  
կրճափ՝ Երեւանի քաղաքապետարանի «Երառսպասարկում» ՓԲԸ
- 1.2. Երեւանի քաղաքապետարանի «Երառսպասարկում» փակ բաժնետիրական  
ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) առեւտրային կազմակերպություն  
հանդիսացող իրավաբանական անձ է, որի կանոնադրական հիմնադրամը  
բաժանված է որոշակի թվով բաժնետոմսերի, որոնք հանդիսանում են Նայաստանի  
Նանրապետության սեփականությունը եւ գտնվում են Երեւանի քաղաքապետի  
( հետագայում Նիմնադիր ) փնօրհնման ներքո:
- 1.3. Ընկերությունը ստեղծվել է Երեւանի քաղաքապետի 29. 12. 2000թ. N 1839  
որոշմամբ՝ ՆՆ արդյունաբերության եւ առեւտրի նախարարության  
«Երառսպասարկում» պետական ձեռնարկության ( գրանցման N 28614002010,  
վկայական N 022540 ) վերակազմակերպման ( կազմակերպական իրավական ձեռի  
փոփոխման ) միջոցով եւ հանդիսանում է վերջինիս իրավահաջորդը:
- 1.4. Ընկերությունը ունի հայերեն եւ ռուսերեն լեզուներով ֆիրմային անվամբ եւ ՆՆ  
զինանշանի պատկերով կտր կնիք եւ դրոշմ:
- 1.5. Ընկերությունը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՆՆ  
քաղաքացիական օրենսգրքով ( հետագայում՝ Օրենսգիրք ), «Բաժնետիրական  
ընկերության մասին» ՆՆ օրենքով ( հետագայում՝ Օրենք), ՆՆ իրավական այլ  
ակտերով եւ սույն կանոնադրությամբ:  
Այլ պետություններում գործունեություն ծավալելիս ընկերությունը  
ղեկավարվում է նաեւ տվյալ երկրի օրենսդրությամբ:
- 1.6. Ընկերության գույքում ներդրված ավանդը կարող է լինել դրամ,  
արժեթղթեր, այլ գույք կամ գույքային իրավունքներ, ինչպես նաեւ դրամական  
զնահարում ունեցող այլ իրավունքներ:
- 1.7. Ավանդի դրամական զնահարումը կապարվում է Նիմնադրի  
համաձայնությամբ եւ ենթակա է անկախ փորձագիտական վերստուգման  
( աուդիտի ):
- 1.8. Ընկերությունն իր պարտավորություններով պարտասխանաբար է իրեն  
պարկանող ամբողջ գույքով:
- 1.9. Ընկերության գտնվելու վայրը – իրավաբանական (փոստային) հասցեն է  
ՆՆ, ք. Երեւան, Խորենացու 26<sup>ա</sup>

## 2. *Ընկերության իրավունակությունը*

- 2.1. Ընկերությունն օգտվում է Օրենսգրքով, Օրենքով եւ ՆՆ իրավական  
ակտերով նախատեսված քաղաքացիական իրավունքներից եւ կրում է  
պարտականություններ:
- 2.2. Ընկերությունը զբաղվում է փնօրհնական գործունեության հետեւյալ  
տեսակներով՝
  - պարենային եւ ոչ պարենային ապրանքների մեծածախ, մանրածախ եւ  
կոմիսիոն առեւտուր,
  - հանրային սնունդ,
  - ենթակա օբյեկտների սեփականաշնորհման գործընթացի կազմակերպում,
  - առեւտրա - միջնորդային ծառայություններ,
  - «փոքր եւ «միջին» ձեռնարկությունների զարգացմանը նպաստելու  
ուղղությամբ օժանդակության եւ օգնության կազմակերպում,

- բորհրդարվական միջոցառումների կազմակերպում՝ փեղեկարվության մշակում, մարկետինգի, կոնսալտինգի համապարփակ ուսումնասիրություններ, «փոքր» եւ «միջին» ձեռնարկությունների գովազդների կազմակերպում, բիզնեսի ծրագրերի կազմում,
  - մայրաքաղաքում գործարար մթնոլորտի աշխուժացման հնարավորությունների ընդլայնում,
  - Նանրապեպրությունում արտադրվող ապրանքային մասսան միջազգային շուկա արտահանելու կազմակերպում,
  - ներդրումների ուղղությամբ ձեռներեցության ակտիվության բարձրացման կազմակերպում: Պոպենցիալ ներդրումների ներգրավում՝ արտադրության եւ առեւտրի ոլորտ,
  - Ընկերության համակարգում ընդգրկված պեպրական գույքի արդյունավետ կառավարում,
  - իրավաբանական ծառայությունների մատուցում, կադրերի պատրաստում եւ վերապատրաստում,
  - Բնակչությանը մատուցվող այլ ծառայությունների իրականացում,
- 2.3. Ընկերությունը կարող է իրականացնել սույն կանոնադրությամբ չնախատեսված, օրենքով – այլ իրավական ակտերով չարգելված ցանկացած այլ ձեռնարկատիրական գործունեություն:
- Օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված գործունեության առանձին փեսակներով Ընկերությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի (հարուկ թույլտվության) առկայության դեպքում:

### 3. Ընկերության կանոնադրական կապիտալը եւ հիմնադրամները

- 3.1. Ընկերության կանոնադրական կապիտալը 116334,0 հազ. դրամ<sup>5</sup> կազմված 1000- ական անվանական արժեքով թվով 116334 սովորական բաժնետոմսից, որոնք լրիվ վճարված են:
- 3.2. Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացում եւ նվազեցում կարող է կատարվել Նիմնադրի որոշմամբ՝ օրենքի 112, 113 հոդվածներին համապատասխան:
- 3.3. Ընկերությունն ունի պահուստային հիմնադրամ, որը կազմում է կանոնադրական կապիտալի 15 % եւ ձեւավորվում է փարեկան մուտքերի առնվազն 5 % մասհանումներով: Պահուստային հիմնադրամի միջոցները օգտագործվում են Ընկերության կորուստները ծածկելու եւ պարտավորությունները մարելու համար:
- 3.4. Ընկերության Նիմնադրի որոշմամբ կարող են սպեղծվել նաեւ այլ հիմնադրամներ:

### 4. Ընկերության բաժնետոմսեր եւ այլ արժեքներ

- 4.1. Ընկերությունը կարող է փեղաբաշխել՝
- սովորական բաժնետոմսեր
  - «Արժեթղթերի եւ արժեթղթերի շրջանառության մասին» ՏՏ օրենքով եւ այլ իրավական ակտերով սահմանված այլ արժեթղթեր:
- 4.2. Ընկերության բոլոր բաժնետոմսերը անվանական են: Ընկերության կողմից թողարկված սովորական բաժնետոմսերի անվանական արժեքը պեպր է լինի միեւնույնը:

- 4.3. Ընկերության բաժնեպատկերը տեղաբաշխված են ընկերության բաժնետերերի ռեեստրում բաժնեպատկերոջ անձնական հաշվում գրանցման տեսքով:
- 4.4. Ընկերության այլ արժեթղթերի տեղաբաշխումը իրականացվում է ընկերության բարձրագույն կառավարման մարմնի (Նիմնադրի) որոշմամբ:
- 4.5. Ընկերության Նիմնադրին՝ Ընկերությունը դեռ գրանցված չլինելու դեպքում փրամադրվում է Ընկերության կանոնադրական կապիտալում նրա ներդրումը հաստատող վկայական, որը բաժնեպատկերի հանդիսանում: Վկայականի հիման վրա Ընկերության պետական գրանցումն իրականացնելուց եւ բաժնեպատկերի արժեքը լրիվ վճարելուց հետո Ընկերության կողմից բաժնետերերին տրվում են համապատասխան քանակությամբ տպագրական եղանակով պատրաստված բաժնեպատկեր կամ բաժնեպատկերի հավաստագիր ( սերտիֆիկատ ), իսկ բաժնեպատկերի տեղաբաշխումը ընկերության արժեթղթերի ռեեստրում բաժնեպատկերոջ անձնական հաշվում գրանցման տեսքով իրականացնելու դեպքում՝ միայն բաժնեպատկերի հավաստագիր (սերտիֆիկատ) :
- 4.6. Բաժնեպատկերի հավաստագիրը ( սերտիֆիկատ ) անվանական արժեքով է, որը վկայում է նրա սեփականատիրոջ կողմից տվյալ ընկերության որոշակի քանակի բաժնեպատկերի տնօրինման մասին:
- 4.7. Նավաստագիրը պատրաստվում է տպագրական եղանակով եւ պետք է պարունակի Օրենքով սահմանված ռեկվիզիտները:
- 4.8. Նավաստագիրը պետք է համապատասխանի Նայաստանի Նանրապետության իրավական ակտերով սահմանված արժեթղթերի պաշտպանության պահանջներին:

## 5. Նիմնադրի իրավունքներն ու պարտավորությունները

- 5.1. Նիմնադիրն իրավունք ունի՝
- 5.1.1. Մասնակցել Ընկերության կառավարմանը:
- 5.1.2. Մասնակցել շահույթի բաշխմանը, ստանալ շահույթաբաժիններ Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից:
- 5.1.3. Առաջնահերթ կարգով ձեռք բերել Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնեպատկերը:
- 5.1.4. Ստանալ տեղեկատվություն Ընկերության գործունեության մասին, ծանոթանալ նրա հաշվապահական գրքերին, հաշվեկշռին, հաշվետվություններին եւ այլ փաստաթղթերին, ինչպես նաեւ գործունեությանը:
- 5.1.5. Ընկերության ընդհանուր ժողովում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի (ներկայացուցչի) :
- 5.1.6. Ընկերության լուծարվելու դեպքում ստանալ պարտավորների հետ կապարված հաշվարկներից հետո մնացած Ընկերության գույքի իր հասանելիք մասը կամ դրա արժեքը:
- 5.1.7. Ընկերության միջոցների հաշվին Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման դեպքում անվճար ստանալ համապատասխան քանակությամբ սովորական բաժնեպատկեր:
- 5.1.8. Օգտվել Օրենսգրքով, Օրենքով եւ ՆՆ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներից:
- 5.2. Նիմնադիրը պարտավոր է՝
- 5.2.1. Ավանդներ ներդնել կանոնադրությամբ նախատեսված կարգով, չափերով, եղանակներով եւ ժամկետներում:
- 5.2.2. Չիրապարակել Ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնի տեղեկություններ:

## 6. Ընկերության շահութաբաժինների վճարման կարգը

- 6.1. Ընկերությունն իրավունք ունի հայտարարել տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց եռամսյակային, կիսամսյակային կամ փարեկան շահաբաժինների վճարման մասին:  
Շահաբաժինները վճարվում են Ընկերության փվյալ փարվա ընթացիկ գույք շահույթից:  
Շահութաբաժինների վճարման, շահաբաժինների չափի եւ դրա վճարման ձեւի մասին որոշումն ընդունվում է Ընկերության կառավարման բարձրագույն մարմնի կողմից:
- Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը իրավունք ունի որոշում ընդունել շահաբաժիններ չվճարելու կամ ոչ լրիվ չափով վճարելու մասին: Այդ որոշումների գործունեության ժամկետը սահմանվում է որոշումն ընդունողի կողմից, բայց չի կարող մեկ փարուց ավել լինել:
- 6.2. Ընկերությունն իրավունք չունի հայտարարել տեղաբաշխման բաժնետոմսերի շահութաբաժինների վճարման մասին, եթե
- 6.2.1. Լրիվ չի վճարել Ընկերության կանոնադրական կապիտալը:
- 6.2.2. Շահութաբաժիններ վճարելու որոշումն ընդունելու պահի դրությամբ Ընկերության տնտեսական վիճակը համապատասխանում է Օրենքով սահմանված անվճարունակության (սննկացման ) հարկանիշներին, կամ նշված հարկանիշները ի հայտ կգան շահութաբաժինների վճարման հետեւանքով:
- 6.2.3. Ընկերության գույք ակտիվների արժեքը փոքր է Ընկերության կանոնադրական կապիտալի գումարից, կամ այդ գումարից փոքր կդառնա շահութաբաժինների վճարման հետեւանքով:

## 7. Ընկերության կառավարման մարմինները

- 7.1. Ընկերություն կառավարման բարձրագույն մարմինը Նիմնադիրն է ( Երեւանի քաղաքապետը ), որը հանդես է գալիս Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի լիազորություններով:  
Ընկերությունը պարտավոր է ամեն փարի գումարել բաժնետերերի ընդհանուր ժողով՝ հերթական ֆինանսական փարվա ավարտից երկու ամիս հետո՝ մեկ ամսվա ընթացքում:  
Բաժնետերերի փարեկան ժողովից բացի գումարվող Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովները համարվում են արտահերթ:  
Ընկերության արտահերթ ժողովներ գումարվում են անհետաձգելի հարցերի բննարկման համար:  
Ընկերության ինչպես փարեկան, այնպես էլ արտահերթ ընդհանուր ժողովները գումարվում են Նիմնադրի կողմից, որը որոշում է.
- 7.1.1. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի գումարման ամսաթիվը, տեղը եւ ժամանակը:
- 7.1.2. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի օրակարգը: Ընկերության ընդհանուր ժողովներում նախագահում է հիմնադիրը կամ նրա կողմից նշանակված անձը:
- 7.2. Օրենքի 86 հոդվածի համաձայն Ընկերությունում խորհուրդ չի ստեղծվում եւ նրա իրավասություններն իրականացնում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը (հիմնադիրը ):
- 7.3. Ընկերության Նիմնադրի իրավասությանն են պատկանում՝
- 7.3.1. Ընկերության կանոնադրության մեջ փոփոխությունների եւ լրացումների կատարումը, կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ
- 7.3.2. Ընկերության վերակազմակերպումը:

- 7.3.3 Ընկերության լուծարումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը, լուծարային հաշվեկշիռների հաստատումը:
- 7.3.4 Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը:
- 7.3.5 Ընկերության պահուստային կապիտալի օգտագործումը:
- 7.3.6 Ընկերության վերստուգողի ընտրությունը եւ նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը:
- 7.3.7 Ընկերության աուդիտին իրականացնող անձի հաստատումը:
- 7.3.8 Ընկերության փարեկան հաշվեպնությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթի եւ վնասների հաշիվների հաստատումը եւ նրա շահույթների եւ վնասների բաշխումը:
- 7.3.9 Ընկերության գույքի օտարման եւ ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը:
- 7.3.10 Ընկերության փնօրենի նշանակումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը:
- 7.3.11 Ղեկավար պաշտոնատար անձանց, աուդիտին իրականացնող անձի աշխատանքի վարձատրման պայմանների որոշումը:
- 7.3.12 Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի եւ հաստիքացուցակի հաստատումը:
- 7.3.13 Այլ հարցեր, որոնք Օրենքով սահմանված են որպես բաժնեպատերի ընդհանուր ժողովի իրավասության հարցեր:
- 7.4 Եթե Ընկերության բաժնեպատերի ընդհանուր ժողովին մասնակցում են Նիմնադրի մեկից ավելի ներկայացուցիչներ, ապա այդ ժողովի որոշումներն ընդունվում են ընդհանուր ձայների պարզ մեծամասնությամբ: Իսկ սույն կանոնադրության 3. կետի 1, 3, 9 ենթակետերով սահմանված հարցերի մասին որոշումներն ընդունվում են ձայների երեք քարորդով:
- 7.5 Ընկերության բաժնեպատերի ընդհանուր ժողովին խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցելու իրավունք ունեն Ընկերության փնօրենը, ինչպես նաեւ վերստուգող եւ աուդիտին իրականացնող անձը:
- 7.6 Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Ընկերության փնօրենը:
- 7.6.1 Տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կատարում Ընկերության անունից,
- 7.6.2 Ներկայացնում է Ընկերությունը ՆՆ-ում – արտասահմանում,
- 7.6.3 Գործում է առանց լիազորագրի,
- 7.6.4 Տալիս է լիազորագրեր,
- 7.6.5 Սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային,
- 7.6.6 Բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ փարադրամային) – այլ հաշիվներ,
- 7.6.7 Առաջարկություններ է նախապատրաստում Ընկերության վճարվող շահաբաժինների չափի – վճարման կարգի վերաբերյալ,
- 7.6.8 Նաստատում է Ընկերության առանձնացված ստորաբաժանումների կանոնադրությունները – նշանակում դրանց ղեկավարներին.
- 7.6.9 Իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, փալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ – վերահսկում դրանց կատարումը,

## **8. Ընկերության ֆինանսատնօրենական գործունեության վերահսկումը**

- 8.1. Ընկերության ֆինանսատնօրենական գործունեության վերահսկումն իրականացնելու համար կառավարման բարձրագույն մարմինը (Նիմնադիրը) ընտրում է վերստուգող 3 փարի ժամկետով: Վերստուգողը կարող է լինել ընկերության կառավարման մարմիններում չընդգրկվող Ընկերության բաժնեպատեր հանդիսացող ֆիզիկական անձ:

Վերստուգողը հետևում է Ընկերության կառավարման մարմինների որոշումների կատարմանը, ստուգում է Ընկերության փաստաթղթերի համապատասխանությունը օրենքներին, այլ իրավական ակտերին եւ Ընկերության կանոնադրությանը:

Վերստուգողի գործունեության կարգը սահմանվում է Տիմնադրի կողմից հաստատվող ներքին փաստաթղթերով:

Վերստուգողի վարձատրության կամ վճարվող փոխհատուցման չափերը եւ պայմանները սահմանվում են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ:

- 8.2. Ընկերության ֆինանսադրամային գործունեության ստուգման նպատակով Ընկերությունը կարող է ներգրավել արտաքին աուդիտորների (կազմակերպության կամ ֆիզիկական անձի) կնքելով նրանց հետ համապատասխան պայմանագրեր:
- Ընկերության աուդիտին իրականացնող անձը հաստատվում է Տիմնադրի կողմից: Նրա հետ պայմանագիրը կնքվում է Ընկերության փնօրենի կողմից, իսկ ծառայությունների համար վճարվող գումարի չափը որոշվում է Տիմնադրի կողմից:

## **9. Ընկերության մասնաճյուղեր եւ ներկայացուցչություններ**

Նայաստանի Նանրապետության փարածքում եւ նրանից դուրս Ընկերությունը չունի մասնաճյուղեր եւ ներկայացուցչություններ:

## **10. Ընկերության վերակազմակերպումն եւ լուծարումը**

- 10.1. Ընկերության վերակազմակերպումը (միաձուլումը, միացումը, բաժանումը, առանձնացումը, վերակազմակերպումը ) եւ լուծարումը կարող է կատարվել Օրենսգրքով եւ Օրենքով սահմանված հիմքերով::
- 10.1.1 Տիմնադրի որոշմամբ:
- 10.1.2 Օրենսդրությամբ լիազորված մարմնի օրինական ուժի մեջ մտած որոշմամբ (վճռով):
- 10.2 Ընկերության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքները եւ պարտականությունները իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:
- 10.3 Ընկերությունը համարվում է վերակազմակերպված կամ լուծարված այդ մասին իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում գրառման պահից:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է  
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ

«01» 10 2001թ.  
Ֆ. 1189 ՈՐՈՇՄԱՄԲ

ԵՐԵՎԱՆԻ ԲԱՂԱՔԱՊԵՏ  
Ո. ՆԱԶԱՐՅԱՆ



ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ ԶԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐՈՒՄ

«20» 01 1998 թ.  
ԳՐԱՆՑՄԱՆ ԹԻՎ 286.140.02010  
ՎԿԱՅԱԿԱՆ 010 022540

ԹԻՎ 5 ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ  
ԳՐԱՆՑՎԵԼ Է ՀՀ  
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ  
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ  
ՍՊԱՆԴԱՐՅԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ  
ԲԱԺՆՈՒՄ  
ԲԱԺՆԻ ՊԵՏ



Բ. ԹՈՐՈՍՅԱՆ  
«11» 10 2001թ.

«Երառսպասարկում»

փակ բաժնետիրական ընկերության

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«Երառսպասարկում» փակ բաժնետիրական

ընկերության կանոնադրության 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

9. Հայաստանի Հանրապետության տարածքում ընկերությունն ունի 3 մասնաճյուղ՝ «Դպրոցական սնունդ» հ. 1, «Դպրոցական սնունդ» հ. 2, «Դպրոցական սնունդ» հ. 3:



**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԵՐԵՎԱՆԻ ԶԱՂԱԶԱՊԵՏԻ**  
«17» դեկտեմբերի 2004թ.  
N 2401-Ա որոշմամբ



ՀՀ Երևանի քաղաքապետ  
*[Signature]* Ե. ԶԱԽԱՐՅԱՆ

**ԳՐԱՆՑՎԱԾ Է  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ  
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ**

Գրանցման թիվ 286.140.02010  
Գրանցման օրը 11.03.1996թ.  
Վկայական 01Ա 022540  
Թիվ *016-3* փոփոխություն գրանցված է  
իրավաբանական անձանց պետական  
ռեգիստրի Կենտրոնի տարածքային  
բաժնի կողմից  
«18» 02 2005թ.  
Կենտրոնի տ/ք պետ՝

*[Signature]*  
Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

**ԵՐԵՎԱՆԻ ԶԱՂԱԶԱՊԵՏԱՐԱՆԻ  
«ԵՐԱՌՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ  
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ**

Կանոնադրության 3.1. կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3.1. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 2.326.680 /երկու միլիոն երեք հարյուր քսանվեց հազար վեց հարյուր ութսուն/ դրամ, որը կազմում է 116334 հատ հասարակ /սովորական/ անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 20 դրամ:

Ընկերության կողմից թողարկված բոլոր 116334 բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետությանը և լրիվ վճարված են նրա կողմից:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը հասարակ /սովորական/ են:»:

Սույն փոփոխությունը հանդիսանում է 26.01.2001թ. պետական ռեգիստրում գրանցված կանոնադրության անբաժանելի մասը: